Արձանագրության 4

Արխիվացման ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/104» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 17.06.2019թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մելիքսեթյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Մաթևոսյան , Լ. Վահանյան
Ա. Մուրադյան, Մ. Խաչատրյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ի. Եղիազարյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Ա. Մելիքսեթյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորության առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Մելիքսեթյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/104 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Մելիքսեթյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ ԵՔ-ԳՀԾՁԲ-19/104 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿ-ին և վերջինիս ներկայացնել **Արխիվացման ծառայությունների** մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ,

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա. Մելիքսեթյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 15:00-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Մելիքսեթյան

Անդամներ՝ ---------- Ե. Մաթևոսյան

---------- Լ. Վահանյան

---------- Ա. Մուրադյան

---------- Մ. Խաչատրյան

Քարտուղար՝ ---------- Ի. Եղիազարյան